Սիամար խորհրդային № 393 րամի Սիմոնյանը, «Վերածըն- վեարկել՝ 63547-ը, դեմ

անվավեր քվեաթերթիկ՝ 74:

# ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Լեռնային Ղարաբաղում իրադրությունը մնում է լարված: Աշխատավորական կոլեկտիվների մեծ մասը, բացառությամբ ագրարային հատվածի և բնակչության կենսապահովման ոլորտի, առաջվա պես աշխատանքի դուրս չի գալիս:

Որոշ չափով բարելավվել է վիճակը Ստեփանակերտի դպրոցներում: Երեկ՝ մայիսի 17-ին, պարապմունքների էր եկել սովորողների 70—80 տոկոսը: Գործում են նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները:

Մայիսի 16-ին մարզի կենտրոնի ծայրամասում՝ Կրկժանում, տեղի ունեցավ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկու հանդիպումը քաղաքի այդ մասի հայ և ադրբեջանցի բնակչության ավագների հետ: Հանդիպման ժամանակ համաձայնություն կայացվեց դադարեցնելու վիճելի արտադրական օբյեկտների շինարարությունը Կրկժանում մինչև այդ հարցի առթիվ վերջնական որոշման ընդունումը: Ա. Ի. Վոլսկին պաշտպանեց երկու ազգությունների ավագների գաղափարը՝ նամակով դիմելու քաղաքի աշխատավորական կոլեկտիվներին, կոչ անելով Ստեփանակերտում ադրբեջանցիներին թույլատրել գալու իրենց աշխատատեղերը: Նա ընդգծեց, որ ոչ մի դեպքում չի կարելի ընդհարումներ թույլ տալ ազգամիջյան հողի վրա: Բոլոր ծագող հարցերը պետք է լուծել ճանգիտ[...] իրադրության մեջ:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ